РОССИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ
УНИВЕРСИТЕТ им. Г.В.ПЛЕХАНОВА
Ереванский филиал

ISSN 2579-2679

ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

- *Поиски*
- *Перспективы*
- *Решения*

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
1 (8)

ЕРЕВАН
2023

Գ. Վ. Պլեխանովի անվան
Ռուսաստանի
տնտեսագիտական
համալսարանի
Երևանի մասնաճյուղ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 1 (8)

- ✓ *Որոնումներ*
- ✓ *Հեռանկարներ*
- ✓ *Լուծումներ*

ԵՐԵՎԱՆ
2023

Երաշխավորված է հրատարակության Գ.Վ. Պլեխանովի
անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի
Երևանի մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ

Թողարկման գլխավոր խմբագիր
Առաքելյան Կ. Հ., տնտեսագիտության թեկնածու

Թողարկման պատասխանատու խմբագիր
Վարդանյան Թ. Ռ., պատմական գիտությունների թեկնածու

Թողարկման պատասխանատու քարտուղար
Գաբրիելյան Բ. Վ., տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Խմբագրական խորհուրդ
Բոստանջյան Վ. Բ., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Հայաստան)
Իսկաջյան Ս. Հ., տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (Հայաստան)
Կիսելյովա Ի. Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Ռուսաստան)
Ռատներ Ս.Վ., տնտեսագիտության դոկտոր (Ռուսաստան)
Հախվերդյան Դ. Ն., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Հայաստան)
Հերրոն Է. Տ., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (ԱՄՆ)
Սարինյան Ռ. Ն., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Հայաստան)
Սուայ Ֆ., Ինտեգրված մարքեթինգային հաղորդակցության դոկտոր, պրոֆեսոր (Իսպանիա)
Ռեսսին Մ. Գ., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Կանադա)

Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. *որոնումներ, հեռանկարներ, լուծումներ*: Գիտական հոդվածների ժողովածու - 1(8), Գ.Վ.Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղ - Երևան, «ԻՆՖՈԿՈՊԻ» ՍՊԸ հրատ. - 2023 - 430 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Համալսարանի, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետազոտողների հոդվածներ:

Ժողովածուն օգտակար կլինի տնտեսագիտական մասնագիտություններով ուսուցանվողների, տեսագործնական հիմնախնդիրների հետազոտությամբ զբաղվողների, ինչպես նաև կառավարման համակարգում աշխատողների համար:

Հոդվածներում առաջադրված խնդիրները, դրանց շուրջ դատողություններն ու առաջարկված լուծումները արտահայտում են հեղինակների անձնական մոտեցումները, որոնք կարող են նաև չհամընկնել խմբագրական խորհրդի դիրքորոշումներին:

© Գ.Վ. Պլեխանովի անվան ՌՏՀ ԵՄ

Российский экономический
университет
имени Г.В. Плеханова
Ереванский филиал

ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ 1 (8)

✓ *Поиски*
✓ *Перспективы*
✓ *Решения*

ЕРЕВАН
2023

Рекомендовано к изданию решением ученого совета
Ереванского филиала РЭУ им. Г.В. Плеханова

Главный редактор выпуска
Аракелян К. О., кандидат экономических наук

Ответственный редактор выпуска
Варданян Т. Р., кандидат исторических наук

Ответственный секретарь выпуска
Габриелян Б. В., кандидат экономических наук, доцент

Редакционный совет
Ахвердян Д. Н., доктор экономических наук, профессор (Армения)
Бостанджян В. Б., доктор экономических наук, профессор (Армения)
Искаджян С. О., кандидат экономических наук, доцент (Армения)
Киселева И. А., доктор экономических наук, профессор (Россия)
Ратнер С.В., доктор экономических наук (Россия)
Рессин М. Г., доктор экономических наук, профессор (Канада)
Саринян Р. Н., доктор экономических наук, профессор (Армения)
Суай Ф., доктор по Интегрированным маркетинговым коммуникациям, профессор (Испания)
Херрон Э. Т., доктор экономических наук, профессор (США)

Проблемы социально-экономического развития: *поиски, перспективы, решения.* Сборник научных статей - 1(8), Ереванский филиал РЭУ им. Г.В. Плеханова – Ереван: изд. ООО «ИНФОКОПИ» – 2023 – 430 стр.

Сборник включает статьи исследователей университета и других организаций.

Сборник предназначен для студентов, обучающихся по экономическим специальностям, специалистов, занимающихся теоретико-практическими исследованиями, и работников сферы управления.

В статьях рассматриваемые вопросы и предлагаемые пути их решения могут не полностью соответствовать мнениям редколлегии, поскольку они выражают индивидуальные подходы авторов.

© ЕФ РЭУ им. Г.В. Плеханова

Plekhanov Russian University of Economics Yerevan branch

THE PROBLEMS OF SOCIAL-ECONOMIC DEVELOPMENT COLLECTION OF ARTICLES 1 (8)

✓ *Search*
✓ *Prospects*
✓ *Solutions*

YEREVAN
2023

Recommended for publication by the Academic Council of
YB Plekhanov Russian University of Economics

Chief Editor
Arakelyan K. H., PhD in Economics

Responsible for the edition
Vardanyan T. R., PhD in History

Responsible secretary of the edition
Gabrielyan B. V., PhD in Economics

Editorial Council
Bostanjyan V. B., Grand PhD in Economics, Professor (Armenia)
Hakhverdyan D. N., Grand PhD in Economics, Professor (Armenia)
Herron E. T., PhD in Economics, Professor (USA)
Iskadjyan S. H., PhD in Economics, Associate Professor (Armenia)
Kiseleva I. A., Grand PhD in Economics, Professor (Russia)
Ratner S. V., Grand PhD in Economics (Russia)
Ressin M. G., PhD in Economics, Professor (Canada)
Sarinyan R. N., Grand PhD in Economics, Professor (Armenia)
Suay F., PhD Integrated Marketing Communication, Professor (Spain)

The problems of Social-economic development: *Search, Prospects, Solutions*. Collection of Articles - 1(8), YB Plekhanov Russian University of Economics – Yerevan, «INFOCOPY» LLC – 2023 – 430 p.

The collection includes articles by researchers of the University and other organizations.

The collection is provided for the students of respective economic specialties and employees, involved in the theoretical and practical research, as well as for workers in the sphere of management.

The issues presented in the articles and proposed ways of their solutions may not be fully consistent with the views of the editorial board, because they are individual.

© YB Plekhanov Russian University of Economics

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ՄՈԴԵԼԸ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐՈՒՄ
Ռոբերտ Ներսեսի Սարինյան, Բելլա Վալերիի Գաբրիելյան 15

ՀԱՅԿԱԿԱՆ «ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ» 1720-ԱԿԱՆ ԹԹ.
Արմեն Մարտինի Այվազյան 38

ԱԲՈՒԼՖԱԶ ԷԼՉԻԲԵՅԻ «ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ» ՏԵՍԼԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Աստղիկ Միքայելի Պողոսյան 61

ՄԱՐԴՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԴԱՊՏԱՑԻԱ (հիմնահարցի հարցադրում)
Մկրտիչ Գրիգորի Կճանյան 76

II. ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐՔԵԹԻՆԳ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՊԱՅԱՄՆՆԵՐՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԻԶՆԵՍ-ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՌԵԻՆԺԻՆԻՐԻՆԳԻ ՀԱՐՑԵՐԸ
Համլետ Բաբկենի Վիրաբյան 84

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
Գայանե Ռուբիկի Թովմասյան, Մարինե Գրիգորի Գևորգյան 98

ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ
Լիլիթ Յուրիի Գալստյան, Դիանա Մացակի Օհանյան 115

ԹՎԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՌՅԱՆՑ ԽԱՂԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
Լիլիթ Յուրիի Դաղայան, Աննա Արմանի Սարգսյան 131

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՊՐԵՄԻՈՒՄ ԴԱՍԻ ԿՈՇԻԿԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ
Լիլիթ Յուրիի Դաղայան, Քրիստինե Էդիկի Լուլուկյան 146

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԿԵՏԻՆԳՈՒՄ ՈՐՊԵՍ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԹԱՆԵԼՈՒ ՈՒՂԻ
Իլյա Ալեքսանդրի Աֆոնին, Օլգա Ալեքսանդրի Միտյանա 158

ՍՊԱՌՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ
Մարինե Հրանդիկի Նիկողոսյան, Օսկար Միրականի Այվազյան 167

ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Արմենուհի Սերյոժայի Ջանջոյան 189

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Մանե Արտաշեսի Խաչատրյան 200

III. ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

ՀՀ-ՈՒՄ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ԹԵՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿՐՃԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Կարապետ Հովհաննեսի Առաքելյան, Օսկար Միրեկանի Այվազյան 220

ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ
Բելլա Վալերիի Գաբրիելյան, Ազատուհի Ռուդիկի Բարսեղյան, Մարատ Վահրամի Հարությունյան 237

ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ. ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ
Մարինա Սերգեյի Ասլանյան 253

ՀԵԼԻՈԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Ստեփան Ռաֆիկի Պապիկյան 267

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՏԱՐԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ
Հրայր Մարտինի Պապոյան 278

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Կիմա Հարությունի Պետրոսյան, Հովհաննես Հարությունի Ուռումյան, Արշակ Ստեփանի Մնացականյան, Լուսինե Կամոյի Ասատրյան 299

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՐՏԱՓ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Սուրեն Հակոբի Պարսյան, Ֆրիդա Ֆրիդրիխի Բահարյան, Մերի Հովսեփի Հովսեփյան, Սամվել Հովհաննեսի Նազարյան 319

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՍՊԱՍՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ
Ռաշիդ Ջասմի Մախմուդյան 334

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ
Լիաննա Հարությունի Օսիպյան 347

ԱԱՀ-Ի ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԸ ԵԱՏՄ-ՈՒՄ
Արթուր Սոսի Պետրոսյան 374

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
Ռուբեն Արմենի Բաղալյան 389

ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
Դիանա Գեննադիի Բաղալյան 407

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 416
Մերի Արթուրի Գրիգորյան

ՀԱՅԿԱԿԱՆ «ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ» 1720-ԱԿԱՆ ԹԹ.

Արմեն Մարտինի Այվազյան
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ, ավագ գիտաշխատող,
քաղաքական գիտությունների դոկտոր

XIII–XV դարերում Հայաստանի մահմեդական կառավարիչները՝ մոնղոլները, այնուհետև կարակոյունլու և ակկոյունլու թուրքմենները վարում էին հայ զինվորական դասի՝ ազնվականության թուլացման ու ոչնչացման նպատակասլաց քաղաքականություն։ Արդեն XVI դարի սկզբին, երբ երկիրը բաժանված էր մահմեդական աշխարհի այդ ժամանակվա խոշորագույն տերությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև, հայկական փոքրաքանակ զինյալ կազմավորումները, ազգային ազնվականության մնացորդների գլխավորությամբ, պահպանվել էին Հայաստանի ընդամենը մի քանի, հիմնականում լեռնային շրջաններում. Արևելյան Հայաստանում՝ Արցախում (Ղարաբաղ), Սյունիքում (Կապան), Լոռիում, ինչպես նաև իրանահպատակ վրացական ու խանական զորագնդերի կազմում, Արևմտյան Հայաստանում՝ Սասունում, Բաբերդում, Համշենում, Վասպուրականի որոշ շրջաններում ու Կիլիկիայի Զեյթուն գավառակում։ Այդ ցիրուցան, տարանջատ մանր ուժերը չունեին ո՛չ գործողությունների ընդհանուր ծրագիր, ո՛չ կենտրոնական հրամանատարություն, ո՛չ միմյանց հետ կայուն կապ։ Բնականաբար, նրանք ի վիճակի չէին դիմադրելու Հայաստանը ռազմակալած օսմանյան և պարսկական ահռելի բանակներին, առավել ևս՝ լուծելու հարձակողական-ազատագրական բնույթի մարտական խնդիրներ։ Ըստ այդմ՝ XVI–XVII դարերում հայկական զինուժի ինքնուրույն գոյության ու գործունեության մասին խոսելն ավելորդ է, թեկուզև այդ դարաշրջանի աղբյուրներն արձանագրել են հայ ապստամբական խոշոր ուժերի պոտենցիալ («քնած») գաղտնի առկայությունը[1]։

---

[1] Այս առումով ուշագրավ է վրաց պատմիչ Փարսադան Գորգիջանիձեի (1626-1703) մի արժեքավոր հաղորդումը, ըստ որի՝ 1632 թ. Գանձասարի կաթողիկոսը պատրաստվում էր 40,000 հայ «հրացանակիրներ» տրամադրել Կախեթի թագավոր Թեյմուրազ Ա-ի գլխավորած հայ-վրացական բանակին («Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»։ Հ. Բ. ԺԳ-ԺԸ դդ.։ Քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմ., առաջ., ներած. և ծանոթագր.։ Աշխ.՝ Լևոն Մելիքսեթ-Բեկի։ Երևան. Մելքոնյան ֆոնդի հրատ., 1936, էջ 112-

Ահա այսպիսի պատմական պայմաններում՝ 1720-ական թթ. Հայաստանի արևելյան (պարսկական) մասում, ազգային-ազատագրական ծրագրով, պատմական թատերաբեմ է իջնում հայկական մարտունակ զինուժ, որի թվաքանակը և՛ հայկական, և՛ օտար աղբյուրների հավաստի գնահատմամբ միայն Արցախում (Ղարաբաղի Սղնախներում) և Սյունիքում (Կապանի իշխանապետությունում), միջին հաշվով, հասնում էր ընդհուպ 60,000 մարտիկի, որից մոտավորապես 40 հազարն Արցախում էին: Սա «գործող զորքերն» էին՝ կանոնավոր և աշխարհազորային բնույթի կազմավորումները, իսկ 1722-1730թթ. այդ հայկական իշխանություններում զորահավաքների միջոցով զինվորագրված հայ մարտիկների թիվը շատ ավելին էր՝ շուրջ 80-100 հազար տղամարդ, ներառյալ պատերազմի ընթացքում նրանց տված անդառնալի կորուստները (մարտական զոհեր, ծանր վիրավորներ, գերիներ, համաճարակներից մահացածներ, անհայտ կորածներ և այլք)[1]:

113: **Накашидзе Н. Т.,** Грузино-русские политические отношения в первой половине XVII века. Тбилиси, 1968, сс. 95-97): Խոսքն, անշուշտ, վերաբերում է ոչ թե կազմ ու պատրաստ զինուժին, այլ այդ ժամանակ Արցախում առկա զորահավաքային կարողությանը (այդ մասին տե՛ս **Այվազյան Ա.**, Արևելահայության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց զորքի թվակազմը 1720-ական թվականներին, Եր.՝ «ՆՏ Հոլդինգ», 2022, էջ 309. **Aivazian Armen M.,** The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, Yerevan, American University of Armenia, 1997, pp. 7-8, 61-62): Իսկ Օսմանյան կայսրության վրա եվրոպական քրիստոնեական բանակների հարձակվելու դեպքում «զենքը ձեռքին ապստամբելու» արևմտահայության պատրաստակամության մասին էր հաղորդում Լյուդովիկոս XIV-ի (1638-1715) արքունիքում հայ պատվիրակ Մահտեսի Մուրատը (Շահ-մուրատ Բաղիշեցի): 1666 թ. ի վեր Փարիզում գտնվող այդ նշանավոր գործիչը՝ 1672 թ. հունվարին Ֆրանսիայի «արև-արքային», հայոց ազատագրական շարժման ղեկավարության անունից, անձամբ հանձնել է մի ուղերձ, որտեղ, մասնավորապես, նշվում էր. «Հայերը, որոնք շատ ստվարաթիվ են Վանի, Բիթլիսի, Թոխաթի, Սեբաստիայի, Կարինի, Կարսի [նահանգների] և մերձակա շրջանների մեջ, միանալով հույների և մյուս քրիստոնյա ազգաբնակությունների հետ, կկարողանան շփոթություններ առաջ բերել Անատոլիայի ներսում և դիմադրել՝ մինչև քրիստոնեական զորքերի հասնելը...» (Quelques discours et lettres adressés à Louïs le Grand, Roy de France, sur l'état et les affaires de l'Empire des Turcs; publiés par le Sieur Georges Bonnet. Paris, 1683. pp. 27–30. **Անասյան Հակոբ.** XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1961, էջ 160-161, 297, 300):

[1] 1722-1730 թթ. Սյունիքում մի քանի փուլերով կազմակերպված զորահավաքների արդյունքում հայկական զինյալ ուժերին զինվորագրվել է ընդհանուր առմամբ 43,000 տղամարդ: Բացի այդ, դեռևս 1722 թվականի սեպտեմբերին Սյունիք էր մտել Վրաստանում կազմավորված 2000 հոգանոց հեծելազորային գունդը՝ Դավիթ-բեկի հրամանատարությամբ: Այդուամենայնիվ, 1724-1730 թթ. Սյունիքում հայկական մշտական (կանոնավոր ու

1724 թ. նոյեմբերի 5-ին Ղարաբաղի Հայոց Սղնախների պատվիրակները Ռուսաստանի արտաքին գործերի պետական կոլեգիայում այսպիսի տեղեկություններ էին հայտնում հայկական վերածնված բանակի կազմի ու սպառազինության մասին.

Ղարաբաղի նույն նահանգից հավաքվել է մինչև 40,000 հայկական զորք, որից 30,000-ը հեծելազոր է, 10,000-ը՝ հետևակ: Այդ ամբողջ զորքը զինված է կայծքարե հրացաններով (фузеи) ու սրերով: Բացի այդ, հեծելազորայիններն ունեն նաև ատրճանակներ: [Զորքերն] ունեն նաև բավարար չափով վառոդ ու արճիճե գնդակներ: Ե՛վ այդ զենքը, և՛ վառոդն ու արճիճե գնդակները հայերն իրենք են պատրաստում, քանի որ այդ հանքերից բավականին շատ ունեն: Բայց ահա թնդանոթներ նրանց տրամադրության տակ առհասարակ չկան, քանզի թեև ունեն պղնձի և երկաթի հանքեր, բայց չունեն թնդանոթ ձուլող վարպետներ...»[1]:

Այս փաստաթղթում *фузея* (հոգն.՝ *фузеи*) բառը նշանակում է ոչ թե պարզապես հրացան, այլ *կայծքարե հրացան*, որն այդ ժամանակաշրջանի ամենաարդիական հրազենն էր[2]: Եվրոպական բանակներում կայծքարե փակաղակով, փողաբերանից լիցքավորվող երկարափող, հարթափող

աշխարհազորային) կազմավորումների թվաքանակը, կախված պատերազմական վայրի-վերումներից, տատանվում էր 15,000-ից 25,000 մարտիկների միջև: Իսկ Ղարաբաղի Սղնախների մշտական զինվորության շարքերում 1722 թ. վերջին եղել է շուրջ 20-30 հազար, 1723 թ. վերջից մինչև 1728 թ. կեսերը՝ մոտավորապես 40 հազար (փոքր տատանումներով հանդերձ), 1729-1731 թթ.՝ դարձյալ 20-30 հազար հայ մարտիկ (մանրամասն տե՛ս **Այվազյան Ա.,** Արևելահայության ժողովրդագրությունը XVII-XVIII դարերում..., էջ 281-299, 464-569):

[1] «...собралось из той же карабахской провинции войска армянского всего до 40 000 человек, из которых 30 000 конницы и 10 000 пехоты… Ружье у того всего войска есть фузеи и сабли, и сверх того у конницы пистолеты, також пороху и свинцу у них довольно, и оное ружье и порох, и свинец делают они, армяня сами, понеже у них таких руд довольно. А пушек при них ничего нет, понеже хотя у них руда медная и железная есть, но мастеров пушечных нет» (Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть II, под ред. Аш. Иоаннисяна, Ер.: Изд. АН Арм. ССР, 1967 (այսուհետև՝ **АРО-II**), док. 291, с. 204).

[2] **Мышковский Е. В.,** Ручное огнестрельное оружие русской армии периода Северной войны 1700–1721 гг. – Сб. исслед. и материалов Арт. ист. музея, 1959. Вып. 4, сс. 57-59; **Потрашков С., Потрашков А.**, Иллюстрированный военно-исторический словарь, М.: ЭКСМО, 2007, с. 956.

հրացանը գործածվում էր XVII դարի երկրորդ կեսից ի վեր: XVIII դարի սկզբին այն արդեն հիմնականում փոխարինել էր իր նախորդին՝ պատրույգավոր հրացանին (мушкет, аркебуза)[1]: Կայծքարե հրացանը բավականին թանկարժեք զենք էր. Արևմտյան Եվրոպայում նրա գինը հավասար էր գյուղաշխատողի տարեկան ընդհանուր վարձին[2]: Եվրոպական պետություններում պատրույգավոր հրացանները կայծքարայիններով փոխարինվել են հիմնականում 1690-ական թթ. մինչև 1715 թ. ընկած ժամանակահատվածում. Ավստրիայում՝ 1689 թ., Շվեդիայում՝ սկսած 1696 թ., Հոլանդիայում և Անգլիայում՝ մինչև 1700 թ., Ֆրանսիայում՝ մինչև 1703 թ., Ռուսաստանում՝ մինչև 1715 թ.[3]:

Կայծքարե ատրճանակ, 18-րդ դ.

---

[1] **Childs J.**, Military Revolution I: The Transition to Modern Warfare. – Charles Townshed, ed., The Oxford History of Modern Warfare. New updated edition (New York: Oxford University Press, 2005), pp. 27-28; **Дельбрюк Г.**, Всеобщая история военного искусства в рамках политической истории, М.: ЭКСМО, 2008, с. 745; cf. **Black J.,** European Warfare, 1660-1815 (New Haven & London, Yale University Press, 1994), p. 39.

[2] **Black J.,** European Warfare, 1660-1815, p. 39.

[3] Նույն տեղում: Հրազենի արդիականացման վերոնշյալ գործընթացի փոքր-ինչ այլ տարեթվեր են բերված հետևյալ աշխատություններում՝ **Дельбрюк Г.,** Всеобщая история военного искусства, сс. 854-855, прим. 134. **Childs J.**, Warfare in the Seventeenth Century, Washington: Smithsonian Books, 2004, p. 155:

Կայծքարե հրացանը գերազանցում էր պատրույգավորին արագաձգությամբ (մեկ րոպեում մոտ 3-4 կրակոց՝ նախորդի առավելագույնը մեկ կրակոցի դիմաց), ավելի բարձր հուսալիությամբ (մասնավորապես, կայծքարն ավելի ջրադիմացկուն էր), ավելի թույլ հետահարումով ու պակաս քաշով (4,6-5,7 կգ՝ 7-10 կգ համեմատ), ավելի փոքր տրամաչափով (17,8-19,8 մմ՝ 18-25 մմ համեմատ), թեև արդյունավետ հրաձգության հեռավորությամբ (համազարկով՝ մինչև 250-300 մետր, մենահատ նշանառու՝ մինչև 100 մետր) այն զիջում էր XVI-XVII դարերի պատրույգավոր հրացանի որոշ տեսակներին, որոնք կրակում էին 300-400 մետր[1]: Ավելին, կայծքարե հրացանի փոքր տրամաչափը զինվորներին թույլ էր տալիս կրել ավելի շատ զինամթերք՝ կես կիլոգրամ արճիճից ստանալով 16 գնդակ, մինչդեռ պատրույգավոր հրացանի համար ստացվում էր 12 գնդակ[2]:

Ինչպես վկայված է Իվան Կարապետի վերոնշյալ նամակում, 1725 թ. վերջին կայծքարե հրացանով արդեն զինված էին Ղարաբաղի Հայոց Սղնախների բոլոր 40,000 մարտիկները: Այդ են հաստատում ևս մի քանի լրատու:

1726 թ. հունվարի 13-ին Շամախիից Դերբենտ «քարավանի հետ ապրանքներով» հասած հայ վաճառական Մարտիրոս Մեսիրովը (Մսրյան), պատմելով նախորդ տարվա իրադարձությունների մասին, հաղորդում էր, որ Գանձակում նստած օսմանյան գլխավոր զորահրամանատարը նամակով սուրհանդակ էր ուղարկել «սղնախի հայերին»՝ պահանջելով նրանցից հինգ տարվա հարկն ու տուրքը: Հրաժարվելու դեպքում նա սպառնացել էր զորքով ներխուժել Ղարաբաղ և ավերել երկիրը: Ըստ Մեսիրովի՝

«Սղնախի հայերը պատասխանել են նրան, թե «մենք փող չունենք, բայց մեզանից յուրաքանչյուրն ունի մեկ հրացան ու մեկ սուր: Եվ եթե իրոք մեր դեմ արշավես, ապա Աստծո օգնությամբ ձեր դեմ կկռվենք: Իսկ

---

[1] **Мышковский Е. В.,** Ручное огнестрельное оружие, сс. 59-60; **Потрашков С., Потрашков А.** Иллюстрированный военно-исторический словарь, с. 956; **Black J.,** European Warfare, 1660-1815, p. 40. Տե՛ս նաև "Мушкет" և "Фузея" հոդվածները հետևյալ մասնագիտացված կայքում http://www.weaponplace.ru: Դելբրյուքը, «հավաստի աղբյուրներ» վկայակոչելով, նշում է, որ XVI-XVII դդ. պատրույգավոր հրացանների կրակի հեռահարությունը հասնում էր 600 քայլի, այսինքն՝ մոտ 400 մետրի (**Дельбрюк Г.**, Всеобщая история военного искусства, с. 746, 855 (прим. 136)):

[2] **Childs J.**, Warfare in the Seventeenth Century, pp. 154-155.

ձեզանից չենք վախենում, որովհետև մեր մարտիկների թիվը մեծ է՝ քառասուն հազար մարդ»»[1]:

1723 թ. դեկտեմբերից ի վեր Ղարաբաղի հայոց ռազմական առաջնորդների՝ գլխավոր հրամանատար Ավանի (Ավան-յուզբաշի) և նրա մերձավոր զինակից Թարխան զորավարի (Թարխան-յուզբաշի) մոտ գտնվող ռուսաց կայսեր պատվիրակ Իվան Կարապետը, տեղերում «տեսչական ստուգայցեր» կատարելուց հետո, 1725 թ. օգոստոսի 16-ին կանցլեր Գ. Ի. Գոլովկինին այս մասին լրացուցիչ կարևոր տեղեկություն է հաղորդում (փակագծերում արված պարզաբանումներն իմն են – *Ա.Ա.*).

«Այսպիսի մարտունակ ժողովուրդ, որ այստեղ (Ղարաբաղում) կա, Ղզլբաշի երկրի (= Սեֆյան Պարսկաստանի) որևէ այլ մասում չկա. այսօր (Ղարաբաղի) բոլոր 12,000 ձիավորները զինված են կայծքարե հրացանով ու թրով: Իսկ հետևակայիններն այնքան շատ են, որ միայն Աստված գիտի [նրանց թիվը], և բոլորն էլ հրացան ունեն: (Ղարաբաղում) ամեն օր պատրաստում են 10 հրացան ու կայծքարե փակաղակ»:

[«Էսպէս կռվարար խալղ, որ էս դեղ կայ, ոչինչ դեղ չկայ Ղզըլպաշի երկրում. էսօր ԺԲՌ մարդ ձիովոր ողջ չախմախով թուֆանկ, ողջ թուրով հազիր են: Ու առանց ձիով էլ յէնչանք, որ Աստուած ա խպար, ու ողջին էլ թուֆանկ կայ: Ամէն օր Ժ թուֆանկայ շինում ու չախմախ այ շինում»:][2]

---

[1] “Из Гянджи турецкой паша писал к сагнацким армянам, чтоб они прислали к нему дани за пять лет и подать: “ежели де у вас дань готова, то пришлите, а ежели не готовы, то изготовьте за все годы, чтоб были готовы. А ежели дань не пришлете, то де мы придем и насильно у вас возьмем. Сагнацкие армяня ответствовали ему, что у нас де денег нет, только есть у всякого по одному ружью и по одной сабле, и ежели хотя придешь к нам, то мы с Божьей помощью против вас стоять будем; и вас не боимся, понеже де у нас людей многое число – сорок тысячи”” (Архив внешней политики России (Москва), ф. Сношения России с Персией, 1726 г., опись 1, док. 4, л. 213а). Այս վավերագիրը, որ արտագրել ու պահում էի թղթապանակներիցս մեկում, ցավոք, ինձ մոտ մասամբ է պահպանվել: Մոսկվայում նույն դիվանում աշխատելու հնարավորություն առայժմ չունենալով, այդուհանդերձ, միայն հիշողության վրա հենվելով, վերապատմեմ, որ վավերագրի շարունակության մեջ ասվում էր, թե ինչպես է Ավան-յուզբաշին ստիպել օսմանցիների պատվիրակին ուտել իր իսկ բերած նամակը, պատվիրելով նրան, որ օսմանցիների գլխավոր հրամանատարին հանձնի «այն, ինչ դուրս կգա»:

[2] **АРО-II**, док. 318, с. 255. Այս պատմական տեղեկության այլ կողմերին վերաբերող մեր քննությունը տե՛ս **Այվազյան Ա.**, Արևելահայության ժողովրդագրությունը XVII-XVIII դարերում..., էջ 293-295:

Այս հաղորդման ռուսերեն թարգմանությունը լրացուցիչ պարզություն է մտցնում. «Здешнее войско так изрядно, что я такого во всей Персии не видел, 12 тысячь конных с огненным ружьем, а пехоты с ружьем же огненным множество. И ружья еще здесь в прибавку делается по 10 фузей на день»[1]: Ռուսերեն «огненное ружье»-ն «фузея»-ի հոմանիշն է, որը նույնպես նշանակում է կայծքարե հրացան: «Фузея» բառը ծագում է ֆրանսերեն fusil-ից, որը նշանակում է «հրահան»:

Կայծքարե հրացան, 18-րդ դ.

Իվան Կարապետի այս արժեքավոր տեղեկությունը թույլ է տալիս մոտավորապես պարզել Արցախում 1720-ական թթ. կեսերին արտադրված կայծքարե հրացանների քանակը: Օրական պատրաստվող 10-ը հրացանը նշանակում է տարեկան արտադրանքի տպավորիչ ծավալ՝ մոտավորապես 3650 հրացան: Բնականաբար, այսպիսի քանակն ամեն տարի նույնը չէր կարող լինել և ենթակա էր որոշակի տատանումների՝ պատերազմական իրավիճակում անընդհատ փոփոխվող այլևայլ ազդեցությունների ներքո: Այդուհանդերձ, քանի որ պատերազմն օսմանյան զավթիչ բանակների դեմ

[1] **АРО-II**, док. 319, сс. 256-257.

հետագա տարիներին է՛լ ավելի սրվեց՝ Արցախում 1726-1728 թթ. հրացան-ների արտադրության ծավալը միայն աճելու էր։

Թուր պատյանով, պոռպատ, փայտ, կաշի (17-18-րդ դդ., Արևմտյան Հայաստան)

Այս առումով կարևոր է նաև հիշել, որ Սյունիքում ևս հնուց ի վեր շահագործվել են պղնձի և երկաթի հանքեր, եղել են մետաղամշակման կենտրոններ ու ձուլող վարպետներ[1], իսկ 1722 թ. ի վեր սյունյաց հայ հրացանակիրները մեծ հմտությամբ մարտնչում էին թվապես գերակշիռ թշնամիների դեմ[2]։ Կայծքարե հրացանի արտադրության տեխնոլոգիան ու կատարելագործումներն Արցախի և Սյունիքի հայոց առաջնորդները, ելնելով երկուստեք անբաժանելի անվտանգության պահանջներից, անհրաժեշտա-բար պետք է միմյանց փոխանցած լինեին։ Ուստի գրեթե աներկբա է, որ Դավիթ-բեկի իշխանապետությունում նույնպես հրազենի արտադրություն է կազմակերպվել։ Այսինքն՝ 1720-ական թթ. կեսերին Սյունիքն ու Արցախը

[1] Ե՛վ Սյունիքում, և՛ Արցախում XIV-XVII դդ. ձուլվել են մեծ զանգեր տեղի պղնձի հանքերի մետաղամշակման կենտրոններում։ Նրանցից մեկի արձանագրության վրա հիշվում են նաև կաղապար պատրաստող ու ձուլող վարպետները (տե՛ս **Քալանթարեան Արամ**. Տաթեւի վանքի զանգերը եւ նրանց արձանագրութիւնները. – Հայագիտական հետազոտություններ, Պրակ Ա, Երեւան, 1974, էջ 115-119)։

[2] «Ղափանցվող պատմությունը» մի քանի անգամ հիշատակում է հայ հրացանակիրներին ու հրազենի արդյունավետ կիրառումը (Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամուել վրդ. Արամյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1978, էջ 122 («Պատում Ստեփան Շահումյանի» հատվածում). 137, 141 (Պատում Տէր Աւետիքի» հատածում). էջ 155, 160, 168, 169, 176 («Համապատում» հատվածում)։

տարեկան արտադրել են առնվազն 5000-6000 կայծքարե հրացան և ատրճանակ:

Պատկերացնելու համար, թե ինչ արտադրական հզորությունների մասին է խոսքը, բաղդատենք այդ թիվը նույն դարաշրջանի ամենազարգացած զինագործական տերություններում հրազենի արտադրության ծավալների հետ: 1632 թ. Տուլայում հիմնադրված Ռուսաստանի զենքի գլխամասային գործարանը 1695 թ. արտադրել է շվեդական փակաղակներով նոր տեսակի 1000 կայծքարե հրացան՝ ֆուզեաներ (фузея): 1696 թ. Պետրոս Ա-ը կարգադրել է Տուլայում արտադրել տարեկան 2000 ֆուզեա, 1701 թ.՝ 8000, 1703 թվականին՝ 15,000 (այս որոշումը հաստատվել է 1712 թ.): 1720 թ. Տուլայի զինագործարանում արտադրվել է 15,720 հետևակային և 6768 դրագունական հրացան, ինչպես նաև 4109 զույգ ատրճանակ: Ձեռքի հրազենի արտադրություն է իրականացվել նաև Օլոնեցի, Լիպեցկի, Կոզմինսկի, Տոբոլսկի և Ուստյուժնե-Ժելեզոպոլսկու երկաթագործական ձեռնարկություններում: 1710 թվականից ի վեր, բոլոր ռուսական զինագործարանների արտադրողականությունը, ընդհանուր առմամբ, կազմում էր տարեկան մոտ 28-30 հազար հրացան և ատրճանակ[1]:

Համեմատության համար՝ 1760-ական թթ. Շարլեվիլի և Սենթ-Էթիենի[2] զինագործարաններում ֆրանսիացիները տարեկան արտադրում էին մոտ 23,000 հրացան[3]: Դրանից մոտ մեկուկես հարյուրամյակ առաջ՝ 1590 թ., հեռավոր Արևելքի հզորագույն բանակն ունեցող Ճապոնիայում տարեկան արտադրվում էր ընդամենը 3000 պատրույգավոր հրացան[4]:

Այսպիսով, 1720-ական թթ. Լեռնահայաստանում տարեկան առնվազն 5000-6000 հրացանների պատրաստումը ենթադրում էր իր ժամանակի և տարածաշրջանի համար բավականին զարգացած մանուֆակտուրային արտադրության գոյություն՝ ճյուղավորված ենթակառուցվածքով հանդերձ,

---

[1] **Мышковский Е. В.,** Ручное огнестрельное оружие русской армии, сс. 70–71; ср.: «История тульского оружейного завода» (URL: http://www.tulatoz.ru/o-predpriyatii/history.php (дата обращения: 29.03.2016)); http://guns.arsenalnoe.ru/m/173/tulyskiy_oruzheynyy_zawod.html.

[2] XVI դարից ի վեր Սենթ-Էթիենը հայտնի էր որպես զենքի արտադրության կարևոր կենտրոն: Ֆրանսիական հեղափոխության տարիներին կարճ ժամանակով վերանվանվել է Armeville, այն է՝ «զինագործական քաղաք»:

[3] **Black J.,** European Warfare, 1660-1815, p. 56.

[4] Տե՛ս **Kelly Devries, Martin J. Dougherty, Christer Jorgensen, Chris Mann & Chris McNab**, Battles that Changed Warfare: 1457 BC-AD 1991 (New York: Metro Books, 2008), p. 109.

ներառյալ (1) համապատասխան հանքերի շահագործում[1], (2) նրանց մոտակայքում գործող զինագործական արտադրամասեր, (3) զորքերին զենքի մատակարարման վստահելի ծառայություն և, իհարկե, (4) հարյուրավոր վարպետներ՝ զինագործներ, դարբիններ, ձուլորդներ, ատաղձագործներ և այլ արհեստավորներ, որոնց աշխատանքով անշուշտ հիացել ու հպարտացել են իրենց ժամանակակից հայերը։ Հայկական զինագործությունում ներգրավված վարպետների, հանքահատների և այլ բանվորների թիվն այդ տարիներին միասին կազմելու էր, մոտավոր հաշվարկով, առնվազն 1-2 հազար մարդ։

Ուշագրավ տեղեկություններ է պարունակում 1729 թ. հոկտեմբերի 21-ին Մոսկվայում Թարխան-յուզբաշու արած հայտարարությունը, ըստ որի՝

«Իրենց (իմա՝ Ղարաբաղի հայկական զորքի) զենքն իրենք են պատրաստում՝ իրենց մոտ բնակվող [զինագործ] զորականների ձեռքերով՝ հրացաններ, սրեր, կարճ թրեր, դաշույններ, ատրճանակներ»։

[«Ружье (իմա՝ оружие – Ա.Ա.) имеют они при себе, которое делают сами, обретающимися при них военными людьми: пищали[2], сабли, тесаки, кинжалы, пистолеты»][3]:

Փաստորեն, զինագործությունը ներառված էր Սղնախների միասնական ռազմական կառույցի մեջ, իսկ հայ զինագործները համարվում էին

---

[1] 1724 թ. սկզբին Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը Ռուսաստանի Գաղտնի գրասենյակի (Тайная канцелярия) պետ կոմս Պ. Ա. Տոլստոյին (1645-1729)՝ Արցախից ուղարկած իր զեկույցներից մեկում գրում էր. «Հայոց այս երկրում, կապարից բացի, կան բազմաթիվ այլ հանքաքարեր, այն է՝ պղինձ, երկաթ, բորակ» [«В стороне армянской есть многие руды сверх свинцовой, а имянно медная, железная, селитреная»] (**АРО-II**, док. 249, с. 112)։

[2] 15-18-րդ դարերում «պիշչալը» (пищаль) հրազենի ընդհանուր ռուսերեն անվանումն էր (Илл. воен.-ист. словарь, с. 702-704), որն այս կոնկրետ դեպքում նշանակում էր կայծքարե հրացան։

[3] **АРО-II**, док. 375, с. 318. Կովկասում և Անդրկովկասում XVIII-XIX դարերում արտադրված սառը զենքի տեսակների, պատրաստման եղանակների, դրվագազարդման, փորագրման և այլևայլ առանձնահատկությունների մասին տե՛ս **Аствацатурян Э. Г.,** Оружие народов Кавказа. Москва-Нальчик: Хоббикнига, 1995, сс. 135-152 (օգտվել ենք այս գրքի համացանցում հրապարակված PDF տարբերակից)։ Հայաստանի պատմության թանգարանում պահվող սառը զենքի նմուշների նկարագրությունը տե՛ս **Ասատրյան Ա., Նազարյան Հ.**, Պատիվ և իրավունք. Զենքերի ընտրանի Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից (հայերեն և անգլերեն), Եր., 2022, էջ 11-32։

«զորականներ»։ Ըստ այդմ՝ իրենց պարտականություններով, իրավունքներով և արտոնություններով նրանք հավասարեցված էին, մերօրյա տերմինաբանությամբ ասած, շարային մարտիկներին։ Այս հաղորդումը նաև վկայում է, որ 1728-1729 թթ. Սղնախների զինագործությունը դեռևս շարունակում էր լայն թափով գործել։

Պատահական չէ նաև, որ 1720-ական թթ. հայ ազատագրական շարժմանը մոտ կանգնած շրջանակներում օգտագործում էին նաև կայծքարե փակաղակի՝ *չախմախ*-ի, հայերեն համարժեքները՝ *կածան (=կայծհան), հրահան, կա[յ]ծարկ, պեծարկ*[1]։ Այս եզրույթների առաջացումն ինքնին հայ զինագործության զարգացման նկատմամբ եղած ուշադրության նշան է։

Տեղին է նաև նկատել, որ 18-րդ դարում աշխարհում կային մեծաթիվ բանակներ ունեցող պետություններ, որոնք թեև լայնորեն օգտագործում էին հրազենը, բայց այլևս հրաժարվել էին եվրոպացիների հետ այդ զինատեսակի զարգացման հարցում համընթաց քայլելու մտքից. մասնավորապես, հարավ-արևելյան Ասիայի պետությունների զինագործարաններում այդպես էլ զարկ չտրվեց կայծքարե փակաղակի ու հրացանի արտադրությանը[2]։ Հետևաբար, նորագույն հրազենի արտադրության հմուտ կազմակերպումը Հայաստանում՝ Արցախում և Սյունիքում, ազգային պետականության երկարատև բացակայության և օսմանյան ու պարսկական բանակների շրջափակման պայմաններում, կարելի է համարել իսկական արտադրա-տեխնիկական սխրանք, որ հավասարապես կատարել են հայ ազատագրական շարժման ղեկավարությունն ու հայ զինագործ վարպետները[3]։

---

[1] Տե՛ս **Եղիա Մուշեղյան Կարնեցի**. Թուրքերեն-հայերեն բառարան, աշխ. Բ. Լ. Չուգասզյանի, Եր., 1986, էջ 70 (հմմտ. էջ 32, ուր հրատարակիչը հատուկ նշում է, որ այս բառարանում ««այ» երկբարբառը տրված է հիմնականում առանց յ-ի»)։ Հայ ազատագրական շարժման ջերմ ջատագով Եղիա Մուշեղյանն իր այս բառարանը հեղինակել է 1721-1724 թթ.։

[2] **Black J.**, European Warfare, 1660-1815, p. 23, հղում է հետևյալ ուսումնասիրությունը՝ **L. Y. Andaya**, Interactions with the outside world and adaptation in southeast Asian society, 1500-1800, in The Cambridge History of Southeast Asia, ed. I. N. Tarling (Cambridge, 1992), pp. 380-395.

[3] Այդ հրազենի արտաքին տեսքի մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել Կովկասում և Այսրկովկասում այդ ժամանակաշրջանում արտադրված և մեզ հասած նմուշներից։ Ընդունված է կարծել, որ «18-րդ դարի առաջին քառորդից մինչև 19-րդ դարի վերջին քառորդը պատրաստված Կովկասյան հրազենում օգտագործվում էր կայծքարե փակաղակի այսպես կոչված «Միջերկրածովյան» տիպը, իսկ իր տեսքով այն բաժանվում էր չերքեզական, կուբանյան և Այսրկովկասյան նմուշների։ Կովկասյան, ինչպես նաև այստեղ տարածում գտած իրանական զենքի կոթն ուղիղ էր, նեղ և պատրաստված էր ընկույզի և չինարու (սոսու) ծառերից։ Փակաղակները սովորաբար զարդարվում էին ոսկու դրվագմամբ արված բուսանախշերով։ Արծաթե հավելազարդերն ու գոտեկապերը

Այնուամենայնիվ, Արցախի 40,000 մարտիկներին հրազենով ապահովելու բարդագույն խնդիրը լուծվել էր ոչ միայն տեղական կամ «հայրենական» արտադրության շնորհիվ, այլև նշանակալից չափով այն ռազմավարի հաշվին, որ հաջողվել էր թշնամուց խլել մանրազնին ծրագրված և փայլուն իրականացված մի շարք հատուկ ռազմագործողությունների շնորհիվ[1]:

Սվինը հայկական զինանոցում: Հրազենն օսմանյան բանակում:

1700 թ. դրությամբ կայծքարե հրացանի փողաբերանին փակցնովի կամ կցված սվինն[2] արդեն հիմնականում փոխարինել էր երկար նիզակներին (пика, pike), որոնցով XV-XVII դարերում հետևակը պաշտպանվում էր հեծելազորային գրոհից[3]: Սվինը հրացանին հաղորդում էր ոչ միայն պաշտպանողական, այլև հարձակողական կարողություն ինչպես հետևակի, այնպես էլ, երբեմն, հեծելազորի դեմ[4]: 1720-ական թթ. հայկական

փորագրազարդ էին և սևադապատ՝ մեծամասամբ բուսանախշերով զարդարված» (**Ասատրյան Ա., Նազարյան Հ.** Պատիվ և իրավունք. Զենքերի ընտրանի..., էջ 35-36): Սառը զենքի և XVI-XIX դդ. հրազենի պատմության ճանաչված մասնագետ Էմմա Աստվածատրյանը նկատում է, որ Մոսկովյան Կրեմլի Զինապալատի թանգարանային հավաքածուներում պահպանվող կովկասյան և անդրկովկասյան հրացանների ամենավաղ նմուշները կայծքարային են և թվագրվում են XVIII դարի առաջին քառորդով: Սակայն չգիտենալով 1720-ական թթ. Արցախում և Սյունիքում հայկական զինագործության մեծածավալ արտադրանքի մասին՝ Մոսկվայի Պետական պատմական թանգարանի երկարամյա առաջատար գիտաշխատակիցն այդ նմուշներին, ենթադրաբար, վերագրել է դաղստանյան ծագում (**Аствацатурян Э. Г.,** Оружие народов Кавказа, с. 153): Մինչդեռ հիշելով, որ 1727-1733 թթ. հարյուրավոր հայ մարտիկներ զենքը ձեռքին Արցախից անցել են մերձկասպյան շրջաններ, այնուհետև տարիներով իրենց զինվորական ծառայությունը շարունակել են ռուսական բանակի կազմում, կարելի է հավանականության մեծ աստիճանով ենթադրել, որ այդ կայծքարե հրացանները կամ դրանցից առնվազն մի քանիսը հայկական ծագում ունեն:

[1] Այդ մասին տե՛ս **Айвазян А.,** Ручное огнестрельное оружие армянской армии в 1720-х гг. (количество, виды, производство и добыча) // Метаморфозы истории, 2016, Вып. 8, сс. 188-195.

[2] Անգլերեն՝ plug bayonet և socket bayonet, ռուսերեն՝ байонет, багинет, багнет, штык втульчатый:

[3] **Childs J.**, Military Revolution I: The Transition to Modern Warfare, p. 28. Փակցնովի սվինները հնարվել էին Ֆրանսիայում 1676 թ., մինչդեռ մյուս երկրներում կցված սվինները դեռ երկար էին օգտագործվում, Ռուսաստանում՝ մինչև 1708 թ. (տե՛ս **Мориц Саксонский**, Теория военного искусства, М.: Центрполиграф, 2009, с. 54):

[4] **Black J.**, European Warfare, 1660-1815, pp. 38-39.

զորամիավորումներում սվինների գործածումն սկզբնաղբյուրներում ուղղակիորեն չի հիշատակված, սակայն, ամենայն հավանականությամբ, հայկական կայծքարե հրացանների առնվազն որոշ խմբաքանակն ունեցած պետք է լիներ նաև հատուկ հարմարեցված սվիններ։ Մեր այս կարծիքի հիմքերը հետևյալն են։

Նախ, սկզբնաղբյուրներում խոսք չկա Սղնախներում նիզակներ արտադրելու կամ գործածելու մասին։ Ինչպես վերը նշվեց, Սղնախների «ռազմարդյունաբերությունը» պատրաստում էր «հրացաններ, սրեր, կարճ թրեր, դաշույններ, ատրճանակներ» (пищали, сабли, тесаки, кинжалы, пистолеты)[1]։ Ռուսերեն «тесак» (կարճ, լայնաշեղբ թուր) բառով նշված զինատեսակը կարող էր լինել նաև սվինի մի տարատեսակ, որը հրացանի փողին հարմարեցվելու դեպքում Ռուսաստանում կոչվում էր «багинет» (բառն առաջացել է ֆրանսերեն baionette-ից)։ Այսինքն, միանգամայն հավանական է, որ լայնաշեղբ սվինները միաժամանակ ծառայած լինեն նաև որպես սվիններ։ Այսպես՝ 1715 թ. արտադրված ռուսական կայծքարե հրացաններն ունեին հենց այդպիսի լայնաշեղբ սվիններ՝ «штык с клинком тесачного типа»[2]։

Փակցնովի սվին, 18-րդ դ.

[1] АРО-II, док. 375, с. 318.

[2] **Маковская Л. К.,** Ручное огнестрельное оружие русской армии конца XIV - XVIII веков: определитель, М.: Воениздат, 1992, с. 34.

Որոշ բանակներում մինչև այսօր կան կարճ թրի (тесак-ի) տեսքով լայնաշեղբ սվիններ, որոնք 19-րդ դարի վերջից սկսած հայտնի են штык-тесак անունով[1]: Հայկական զորքերում, մի կողմից, նիզակների բացակայությունը, մյուս կողմից հրացաններով գրեթե լիակատար ապահովվածությունը (առնվազն 1725 թ. կեսերից ի վեր) ինքնին հուշում է, որ թշնամու հեծելազորի հետ հաճախակի բախումներում՝ համազարկային կրակից հետո ձեռնամարտի են բռնվել ոչ միայն սրերով և սառը զենքի այլ տեսակներով, այլ, շատ հավանական է, նաև սվիններով: Այս առումով հետաքրքիր է նաև արևելահայ զորականների՝ թշնամու հեծելազորի դեմ կռվելու մարտավարության մասին հետևյալ տեղեկանքը, թեկուզև այն գրանցվել է երկու դար ավելի վաղ՝ XVI դարի մի ուղեգրում. «Նրանք կռվում են մեծ մասով հետիոտն: Հանդիպելով թշնամուն՝ փորում են խրամատների երկար շարք և դրանով պատնեշավորված՝ կռվում գրոհող ձիերի (իմա ձիավորների՝ Ա.Ա.) դեմ բավականին սուր ու կարճ իրենց զենքերով»[2]:



Ռուսական կայծքարե հրացան և սվին, 1701 թ.

---

[1] Տե՛ս **Потрашков С., Потрашков А.**, Иллюстрированный военно-исторический словарь, сс. 890, 1042:

[2] **Հովհաննիսյան Ա. Գ.,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. Գիրք երկրորդ: Եր.՝ ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 380:

1720-ական թթ. արևելահայ զորքերի հրամանատարությունը փորձում էր պարսկական և օսմանյան ուժերի թվային առավելությանը հակադրել ինչպես դրսից ներմուծված, այնպես էլ տեղում արտադրված նորագույն հրազենը՝ կայծքարե հրացանը, այն կիրառելու նորագույն մարտավարությամբ հանդերձ: Տեխնոլոգիական առավելության հասնելու պատերազմական կարևոր սկզբունքի այդ որդեգրումը հուշում է, որ հայկական զորքերը պետք է ծանոթ լինեին ու նաև գործածեին սվինը, որի արտադրությունն, այս կամ այն տարատեսակով, առանձնահատուկ դժվարություն չէր ներկայացնելու կայծքարե հրացան, ատրճանակ և սառը զենքի լայն տեսականի պատրաստող հայ զինագործների համար:

Եվրոպայում սվինների զանգվածային գործածմանն անցնելու մասին ապստամբություն նախապատրաստող հայոց ղեկավարությանը պետք է հաղորդեր դեռևս Իսրայել Օրին, որը պատերազմելու եվրոպական մարտավարությանն ու սպառազինությանը ծանոթանալու նպատակով 1681-1696 թթ. ծառայել էր իտալական, ֆրանսիական ու Հռենոսյան Պֆալցի բանակներում և՛ իբրև մարտական սպա, և՛ իբրև ռազմական մատակարար[1]: Օրին նաև մասնակցել էր մի շարք խոշոր ռազմարշավների և աչքի ընկել իր քաջությամբ: Այդ մասին Պֆալցի կուրֆյուրստ Հովհան-Վիլհելմն (1690-1716) գրում էր հայ մելիքներին. «նա մեզ մոտ տեղի ունեցող պատերազմական գործողություններին մասնակցած և վարժված մեկն է: Մենք ճշմարտապես տեսել և իրազեկ ենք նրա մեր բանակում ցույց տված քաջագործություններին, վստահեցեք իրեն: Տասը տարի է, ինչ նա վարժված է մեր կռվում»[2]: Օրիի զինվորական ծառայությունը համընկել է հե՛նց այն տարիների հետ, երբ Եվրոպայում սվինն արագորեն փոխարինում էր երկար նիզակին: Այսպես, Սաքսոնիայի և Վուրտեմբերգի (գուցե նաև վերջինիս սահմանակից Պֆալցի) բանակներն ամբողջությամբ անցել էին սվինին 1680-ականների վերջից մինչև 1690-ականների կեսերն ընկած միջոցին, Բրանդենբուրգ-Պրուսիան՝ 1689 թ., Դանիան՝ 1690 թ., ֆրանսիացիները լրիվ հրաժարվեցին երկար

---

[1] Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, под ред. Аш. Иоаннисяна, Ер.: Изд. АН Арм. ССР, 1964, док. 86, с. 216-217; **Աբրահամյան Ա. Գ.,** Իսրայել Օրի, Եր.՝ «Հայաստան» հրատ., 1978, էջ 39-40:

[2] **Աբրահամյան Ա. Գ.,** Իսրայել Օրի, էջ 40. հմմտ. **Эзов Г. А.,** Сношения Петра Великого с армянским народом. Документы, извлеченные из Московского главного и С.-Петербургского архивов Министерства Иностранных Дел... и других учреждений, СПб: Типография Импер. АН, 1898, док. 6, с. 18:

նիզակից 1703 թ. (հագցնովի կամ փակցնովի սվինը Ֆրանսիայում հայտնվել էր 1647 թ., 1689 թ. փոխարինվելով սվինի կցվող տարատեսակով), անգլիացիները՝ 1704 թ., հոլանդացիները՝ 1708 թ., ռուսները՝ 1721 թ.[1]:

Փաստորեն, 1720-ական թվականներին հրազենի արդիականությամբ Արցախի և Սյունիքի հայկական զորքերը գերազանցում էին իրենց գլխավոր հակառակորդին՝ օսմանցիներին, որոնց սպառազինության մեջ դեռևս գերակշռում էին պատրույգավոր հրացանները: Բանն այն է, որ, ի տարբերություն մյուս եվրոպական բանակների, որոնք մինչև 1715 թ. ամբողջությամբ վերազինվել էին կայծքարե հրացաններով, XVIII դարի երկրորդ կեսին օսմանյան բանակը դեռ կռվում էր հնացած հրազենով[2]: Նույնիսկ օսմանյան բանակի ընտրագույն ասկյարների՝ արտոնյալ ենիչերիների հրացանները հիմնականում պատրույգավոր էին: Ընդ որում, օսմանյան հրացաններն ունեին տարբեր տրամաչափ, որը լրջորեն բարդացնում էր գնդակների բավարարաչափ արտադրության և մատակարարման խնդիրը: Ուստի օսմանցիներն իրենց գումակի մեջ դնում էին նաև արճիճե սալիկներ, որոնք բաժանում էին ասկյարներին, երբ սկզբնապես նրանց տրված գնդակները վերջանում էին: Յուրաքանչյուր հրացանակիր ասկյար կացինով բաժանում էր այդ սալիկներն իր անձնական հրազենի տրամաչափին համապատասխան չորսանկյուն կտորների ու դրանցով լիցքավորում իր հրացանը[3]: Օսմանցիների պատրույգավոր հրացաններն այն աստիճան ծանր էին, որ դրանցից հնարավոր չէր կրակել առանց հատուկ եղանանման հարմարանքի: Օսմանյան գերության մեջ եղած իտալացի զինվորական և գիտնական կոմս Լուիջի Մարսիլյին (1658-1730) նկատում էր, որ այդ հրացաններն արշավանքի համար անպիտան էին, սակայն «պատերազմ գնալիս թուրքերն, այնուամենայնիվ, դրանք վերցնում

---

[1] **Black J.,** European Warfare, 1660-1815, p. 39; **Childs J.**, Military Revolution I: The Transition to Modern Warfare, p. 28; **Дельбрюк Г.,** Всеобщая история военного искусства, сс. 854-855 (прим. 134). Մյուս կողմից, Եվրոպայում իրական սվինամարտը չափազանց հազվադեպ էր պատահում. հետևակն անընդհատ կրակելով առաջ էր շարժվում և, երբ վերջում հաջողվում էր ընդհուպ մոտենալ թշնամուն ու նետվել սվիններով գրոհի, պաշտպանվողները լքում էին իրենց դիրքերը և հրաժարվում դիմադրություն ցույց տալուց (այս մասին մանրամասն տե՛ս **Дельбрюк Г.,** Всеобщая история военного искусства, сс. 746, 854-855 (прим. 135)).

[2] **Childs J.,** Warfare in the Seventeenth Century, p. 155.

[3] Տե՛ս **Марсильи [граф Луи-Фердинандо]**, Военное состояние Оттоманской империи с ее приращением и упадком, С. Петербург, 1737 (գիրքն առաջին անգամ տպագրվել է ֆրանսերեն 1732 թ. Ամստերդամում), Часть II, с. 12.

էին իրենց հետ, հատկապես եգիպտացի ենիչերիները, որոնք, ինքս եմ տեսել, թե ինչպես են թիրախին դիպուկ կրակում՝ աջ ոտքով հետադարձ շրջան անելով, որպեսզի հրացանի հետահարումն իրենց չսպանի»[1]: Ենիչերիները, ինչպես նաև օսմանյան հեծելազորայինների մեծամասնությունը կրում էին նաև ատրճանակներ ու սրեր[2]:

Կովկասյան դաշույններ

Այդուամենայնիվ, գոյություն ուներ մեկ խոշոր բացասական հանգամանք, որը մարտի դաշտում հաճախ զգալիորեն նվազեցնում էր հայերի՝ կայծքարե հրացաններում ունեցած առավելությունը: Բանն այն է, որ հրազենի արդիականությամբ գերազանցելով օսմանցիներին՝ հայկական զորքերը, զուրկ էին հրետանուց (բացառությամբ մի քանի, թերևս, առգրավված նմուշների), որը մեծ թվով առկա էր օսմանյան բանակում:

[1] Նույն տեղում, էջ 11:
[2] Նույն տեղում:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ա. Գ., Իսրայել Օրի, Եր.՝ «Հայաստան» հրատ., 1978։
2. Այվազյան Ա., Արևելահայության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց զորքի թվակազմը 1720-ական թվականներին, Եր.՝ «ՆՏ Հոլդինգ», 2022։
3. Անասյան Հակոբ. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր.՝ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1961։
4. Ասատրյան Ա., Նազարյան Հ., Պատիվ և իրավունք. Զենքերի ընտրանի Հայաստանի պատմության թանգարանի հավաքածուից (հայերեն և անգլերեն), Եր., 2022։
5. Եղիա Մուշեղյան Կարնեցի. Թուրքերեն-հայերեն բառարան, աշխ. Բ. Լ. Չուգասզյանի, Եր., 1986։
6. Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. Գիրք երկրորդ։ Եր.՝ ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959։
7. «Ղափանցվող պատմությունը» մի քանի անգամ հիշատակում է հայ հրացանակիրներին ու հրազենի արդյունավետ կիրառումը (Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց Սամուել վրդ. Արամյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1978։
8. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»։ Հ. Բ. ԺԳ-ԺԸ դդ.։ Քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմ., առաջաբանով, ներած. և ծանոթագր.։ Աշխ.՝ Լևոն Մելիքսեթ-Բեկի։ Եր.՝ Մելքոնյան ֆոնդի հրատ., 1936։
9. Քալանթարեան Արամ. Տաթեւի վանքի զանգերը եւ նրանց արձանագրութիւնները. – Հայագիտական հետազոտություններ, Պրակ Ա, Երեւան, 1974։

10. Айвазян А., Ручное огнестрельное оружие армянской армии в 1720-х гг. (количество, виды, производство и добыча) // Метаморфозы истории, 2016, Вып. 8, сс. 176-200.
11. Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть I, под ред. Аш. Иоаннисяна, Ер.: Изд. АН Арм. ССР, 1964.

12. Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть II, под ред. Аш. Иоаннисяна, Ер.: Изд. АН Арм. ССР, 1967.
13. Архив внешней политики России (Москва), ф. Сношения России с Персией, 1726 г., опись 1, док. 4, л. 213а.
14. Аствацатурян Э. Г., Оружие народов Кавказа. Москва-Нальчик: Хоббикнига, 1995:
15. Дельбрюк Г., Всеобщая история военного искусства в рамках политической истории, М.: ЭКСМО, 2008.
16. «История тульского оружейного завода» (URL: http://www.tulatoz.ru/o-predpriyatii/history.php).
17. Маковская Л. К., Ручное огнестрельное оружие русской армии конца XIV - XVIII веков: определитель, М.: Воениздат, 1992.
18. Марсильи [граф Луи-Фердинандо], Военное состояние Оттоманской империи с ее приращением и упадком, С. Петербург, 1737.
19. Мориц Саксонский, Теория военного искусства, М.: Центрполиграф, 2009.
20. Мышковский Е. В., Ручное огнестрельное оружие русской армии периода Северной войны 1700–1721 гг. – Сб. исслед. и материалов Арт. ист. музея, 1959. Вып. 4, сс. 57-73.
21. "Мушкет" и "Фузея" (URL: http://www.weaponplace.ru).
22. Накашидзе Н. Т., Грузино-русские политические отношения в первой половине XVII века. Тбилиси, 1968.
23. Потрашков С., Потрашков А., Иллюстрированный военно-исторический словарь, М.: ЭКСМО, 2007.
24. Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом. Документы, извлеченные из Московского главного и С.-Петербургского архивов Министерства Иностранных Дел... и других учреждений, СПб: Типография Импер. АН, 1898.
25. Aivazian Armen M., The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal, Yerevan, American University of Armenia, 1997
26. Black J., European Warfare, 1660-1815. New Haven & London, Yale University Press, 1994.

27. Childs J., Military Revolution I: The Transition to Modern Warfare. – Charles Townshed, ed., The Oxford History of Modern Warfare. New updated edition. New York: Oxford University Press, 2005.
28. Childs J., Warfare in the Seventeenth Century, Washington: Smithsonian Books, 2004.
29. Kelly Devries, Martin J. Dougherty, Christer Jorgensen, Chris Mann & Chris McNab, Battles that Changed Warfare: 1457 BC-AD 1991. New York: Metro Books, 2008.
30. Quelques discours et lettres adressés à Louïs le Grand, Roy de France, sur l'état et les affaires de l'Empire des Turcs; publiés par le Sieur Georges Bonnet. Paris, 1683.

ՀԱՅԿԱԿԱՆ «ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ» 1720-ԱԿԱՆ ԹԹ.

Արմեն Մարտինի Այվազյան
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ, ավագ գիտաշխատող,
քաղաքական գիտությունների դոկտոր

Համառոտագիր

1720-ական թթ. արևելահայկական Ղարաբաղ (Արցախ) և Կապան (Սյունիք) գավառներում վերստեղծվեցին հայկական զորքեր (մոտ 60,000 մարտիկ), որոնց հաջողվեց գլխովին զինել ժամանակի ամենաառաջադեմ հրաձգային զենքով՝ կայծքարե հրացաններով ու ատրճանակներով: Տեղում տարեկան պատրաստվում էր մոտ 5-6 հազար կայծքարե փակաղակ, այն է՝ հրացան և ատրճանակ: Դա ենթադրում էր իր ժամանակի և տարածաշրջանի համար բավականին զարգացած մանուֆակտուրային արտադրության գոյություն՝ ճյուղավորված ենթակառուցվածքով հանդերձ, ներառյալ (1) համապատասխան հանքերի շահագործում, (2) մոտակայքում գործող զինագործական արտադրամասեր, (3) զորքերին զենքի մատակարարման վստահելի ծառայություն և, իհարկե, (4) հարյուրավոր վարպետներ՝ զինագործներ, դարբիններ, ձուլորդներ, ատաղձագործներ և այլ

արհեստավորներ։ Հայկական զինագործությունում ներգրավված վարպետների, հանքահատների և այլ բանվորների թիվն այդ տարիներին միասին կազմելու էր, մոտավոր հաշվարկով, առնվազն 1-2 հազար մարդ։

1720-ական թվականներին հրազենի արդիականությամբ Արցախի և Սյունիքի հայկական զորքերը, փաստորեն, գերազանցում էին իրենց գլխավոր հակառակորդին՝ օսմանյան բանակին, որի սպառազինության մեջ՝ անգամ էլիտային յենիչարական գնդերում, դեռևս գերակշռում էին պատրույգավոր հրացանները։

Բանալի բառեր՝ 1720-ական թթ., Ղարաբաղի Հայոց Սղնախներ, զինագործություն, պատրույգավոր հրացան, կայծքարե փակաղակ և հրացան, սվին:

АРМЯНСКАЯ «ВОЕННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ» В 1720-Е ГГ.

Армен Мартинович Айвазян
«Матенадаран» Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца, старший научный сотрудник, доктор политических наук

Аннотация

В 1720-х гг. в восточноармянских провинциях Карабах (Арцах) и Капан (Сюник) было воссоздано армянское войско (ок. 60 000 бойцов), в массовом порядке принявшее на вооружение, как выявляется в данной статье, самое совершенное огнестрельное стрелковое оружие своего времени — кремнёвые ружья и пистолеты. В статье выявляется количество изготавливаемых в Карабахе и Капане кремнёвых замков (ок. 5–6 тысяч в год), что подразумевало наличие довольно развитого мануфактурного производства со своей инфраструктурой, включающей: (а) эксплуатацию соответствующих рудников; (б) действующие поблизости от них производственные цеха; (в) надёжную службу снабжения войск оружием и (г) сотни мастеров — оружейников, кузнецов, литейщиков, плотников и других ремесленников. Численность мастеров, горняков и других рабочих, задействованных в армянской

оружейной промышленности, в те годы могла доходить, ориентировочно, до не менее 1-2 тысяч человек.

Фактически, по качеству ручного огнестрельного оружия армянские войска превосходили своего главного противника – османскую армию, в вооружении которой, даже в элитных янычарских частях, все еще преобладали фитильные ружья.

Ключевые слова: 1720-е гг., Карабахские Армянские Сагнаки, оружейное дело, огнестрельное оружие, фитильное ружьё, кремнёвый замок, фузея, штык.

THE ARMENIAN "MILITARY INDUSTRY" IN THE 1720'S

Armen Ayvazyan
«Matenadaran» Scientific Research Institute of Ancient
Manuscripts named after Mesrop Mashtots,
Senior Researcher, Doctor of Political Sciences

Abstract

In the 1720s, the Armenian army was re-established in the Eastern Armenian provinces of Karabakh (Artsakh) and Kapan (Syunik). Comprising about 60,000 men, these troops *en masse* adopted the most modern handguns of the time: flintlock rifles and pistols. The article reveals the number of flintlocks made in Karabakh and Kapan (about 5-6 thousand per year), which implied the presence of a fairly developed manufacturing with its own infrastructure, including: (a) the exploitation of the relevant mines; (b) weapons production in small arms factories in their vicinity; (c) a reliable arms supply; and (d) hundreds of craftsmen – gunsmiths, blacksmiths, foundry hands, carpenters and other artisans and workers. The number of craftsmen, miners and other workers involved in the Armenian arms industry in those years could reach, approximately, up to at least 1-2 thousand people.

In fact, in terms of the quality of handguns, the Armenian troops surpassed their main enemy, the Ottoman army, in whose armament, even in the elite Janissary units, matchlock guns still prevailed.

Keywords: 1720s, Karabakh Armenian Sagnaks, gunsmithing, firearms, matchlock gun, flintlock, bayonet.

Հոդվածը ստացվել է 05.06.2023թ., երաշխավորվել է հրատարակման 15.06.2023թ.